



ՀՆԴԻԿՆԵՐԻ
ԱՌԱՋՆՈՐԴԸ

891.85Ե
U-40

ՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1928

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Գ Ր Ք Ո Ւ Յ Կ Ն Ե Ր

Լույս են տեսել՝

ՅեՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ	(մեծադիր, նկարազարդ)	15 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՅԶԿԱՆ	» »	28 կ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ	» »	28 կ.
ՄՈԾԱԿԻ ՅԵՎ ԱՐՁԻ ՄԱՍԻՆ	» »	15 կ.
ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ	» »	16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ	» »	18 կ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ		12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ		12 կ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ		8 կ.
ԹՈՉՈՒՆՆԵՐ (գրեհատիպ այլբոմ)		25 կ.
ՅԵՐԱԺԻՇՏ ԴԱՆԻԿԸ	(մեծադիր, նկարազարդ)	33 կ.
ԴՈՇԻԿԸ ՃԱՀՃՈՒՄ	» »	20 կ.
ԻՆՉՈՎ ԿՈՒՋԵՅԻՐ ՃԱՄԲՈՐԴԵԼ	» »	
ՏԻՄԸ	» »	30 կ.
ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՀԱՎ	» »	
ՓՈՔՐԻԿ ԽՈՆ	» »	18 կ.
ՌԻԿԿԻ-ՏԻԿԿԻ-ՏԱՎԻ	« »	28 կ.
ՀՆԴԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ	» »	18 կ.
ՍԱՌՅԻ ՎՐԱ	» »	25 կ.

Տպագրվում են՝

ՏՈՆ ՈՐՎԱ ԳԻՇԵՐԸ	» »	
ՃՈՒՏԻԿՆ ՈՒ ԿՈՒՏԻԿԸ	» »	
ԿԻՇԸ	» »	
ԽՈՒԴԱՆ	» »	

391.857
U-40 48

Հ. ՍԵՆԿԵՎԻՉ

ՀՆԴԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Թարգմ. ԽՆԿՈ-ԱՊՆԵՐ

1183 YAM D E

5974


30 JUL 2013

Կլիշեները տրամադրել է Գ. Ֆ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ Հրատարակչությունը



868753

Заказ № 803. Главлит 98318. Тираж 3000.



ՀՆԴԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

I

Անտիլոպա քաղաքում մեծ կենդանություն կար: Բնակիչներն շտապում էին կրկես, վորը հենց այսօր եր յեկել և այսօր ել հայտարարել իր առաջին ներկայացման մասին: Աֆիշներում հայտարարված եր, թե գուրս կգան պարուհիներ, ձիավորներ, յերգիչներ, լարախաղացներ և ծաղրածուներ:

Անտիլոպան շինված եր նույնանուն գետի ափին՝ Հյուսիսային Ամերիկայի Տեխաս նահանգում: Այդ քաղաքը բոլորովին նոր ծագում ուներ: Հինգ տարի առաջ գետի նույն ափին վոչ մի տուն գոյություն չուներ և բոլոր հարևան գյուղերում չեր կարելի պատահել և վոչ մի սպիտակի:

Վոչ հեռու այգտեղից, վորտեղ հիմա հիմնված ե Անտիլոպան, այն ժամանակ գտնվում եր հնդիկների Հիավաթա գյուղը: «Սև ոճեր» ցեղի մայրաքաղաքն եր այդ: Գերմանացիք նրա շրջակայքում հիմնեցին իրենց գաղութը և ձգտեցին ավերել Հիավաթան, ասելով՝ թե հնդիկները իրենց խանգարում են:

Հնդիկներն ել միայն պաշտպանում էին իրենց հողը, վորի վրա հնուց ապրում էին, և Տեխասի կառավարությունն ել շատ հանդիսավոր կերպով այդ հողն ընդմիջտ տիրելու իրավունք եր ավել նրանց, բայց գաղթական գերմանացիք այդ իրավունքը բոլորովին չէին ուզում ճանաչել:

Նրանք «Սև ոճեր» ցեղից խլեցին շուրը, հողը, անխնա կոտորում էյին հնդիկներին, բայց դրա փոխարեն նրանց տվին քաղաքակրթություն, գլխավորապես ողի խմեցնելով նրանց: Կարմրամորթները քաջությամբ էյին կռվում: Այդպես յերկար տևեց անհավասար կռիվը:

Վերջապես՝ մի գիշեր գերմանական բոլոր գաղութները միացան, հավաքեցին մոտ 400 մարտիկ և հարձակվեցին քնած Հիավաթայի վրա: Հաղթությունը կատարյալ եր: Բոլոր հնդիկները՝ առանց սեռի և հասակի խարուխան՝ սպանվեցին, շենքերը վառվեցին, մնացին մի քանի խմբակներ, վոր այդ գիշեր վորսի էյին գնացել... Հիավաթան ջնջվեց յերկրի յերեսից: Գաղթականները կարող էյին հանգիստ ապրել և հպարտանալ իրենց «կուլտուրայով»...

Գերմանացիք տեղափոխվեցին այնտեղ, վորտեղ քիչ առաջ գտնվում եր Հիավաթան, և նրա փոխարեն բարձրացավ մի նոր քաղաք՝ Անտիլոպան:


Հինգ տարուց հետո այդ քաղաքում յերկու հազարից ավելի բնակչություն կար:

Գետափին բացվեցին սնդիկի շերտեր, և քաղաքի ազգաբնակչությունը յերկու անգամ ավելացավ:

Անտիլոպան հիմնելուց վեց տարի հետո, նրա շրջակայքում բռնվեցին «Սև ոճեր» ցեղի ներկայացուցիչները՝ 19 հոգի՝ և Լինչի որենքով կախվեցին քաղաքի հրապարակում: Այն ժամանակից սկսած արդեն վոչ մի բան չկար, վոր քաղաքի ծաղկելուն արգելք լիներ:

Քաղաքն աճեց և զարգացավ: Հիմնվեցին յերկու որաթերթ. յերկաթուղին միացրեց Անտիլոպան Միացյալ Նահանգների մյուս քաղաքների հետ: Գլխավոր փողոցի վրա գտնվում էյին 3 դպրոց, վորոնցից մեկը բարձրագույն: Այն փողոցում, վորտեղ կախվեցին «Սև ոճեր» ցեղի կենդանի մնացածներից վերջինները, հանդիսավոր կերպով կառուցվեց բարեգործական հիմնարկը:

Քահանաները ամեն կիրակի քարոզում էյին յեկեղեցիներում սեր ղեպի մերձավորը, հարգանք ղեպի ոտարի սեփականությունը և ուրիշ շատ առաքինություններ, առանց վորոնց կյանքը կյանք չի քաղաքակիրթ հասարակության մեջ, և մինչև անգամ դասախոսություններ էյին կարդացվում «ազգերի իրավունքների մասին»:



Գերմանացիք ցնծում եյին: Նրանք սնդիկի, նարնջի, գարու, գինու առևտուրով եյին պարապում, առևտուրն ահագին շահ եր բերում նրանց, և վոչ վոք չեր իմանում, վոր այդ հաստափոր առևտրականներն այն մարտիկներն են, վոր մի ժամանակ վոչնչացրին Հիավաթան: Հիմա յուզում լլղղացող ղեմքերը հանգիստ եյին: Վոչ վոք չեր հիշում «Սև ոճերին»:



II

Ամբողջ քաղաքն շտապում եր գնալ կրկես: Աֆիշաները գրավում եյին բնակիչներին: Ծրագիրը հայտարարում եր.

ՅԵՂՈՒՅԹ 15 ՄԵՏՐ ԼԱՐԻ ՎՐԱ,
ՀԱՅՏՆԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶ
ՍԵՎ ԲԱԶԵ-ՍԱԽԵՄԻ,*
ՍԵՎ ՈԶ

Ահեղ մարտիկների վերջին ժառանգի!
Վերջին առաջնորդի!
Ցեղի վերջին ներկայացուցչի!
I. Զրոսանք.
II. Թոխչք Անտիլոպից.
III. Մարտի պար և մահվան յերգ:

* Սախեմ—հնդիկների լեզվով՝ առաջնորդ:

Սև Բագեն մի այլ քաղաքում այնպիսի հաջողություն չեր ունենա, այնպիսի հետաքրքրություն դեպի ինքը չեր վարթեցնի, բայց Անտիլոպի համար զարմանալի հետաքրքիր եր, մանավանդ վոր կրկես պահողն արդեն հայտնել եր տեղական լրագրում, վոր ինքը 15 տարի առաջ սարերում պատահել ե մի ծեր հնդկացու՝ 10 տարեկան յերեխան հետը: Այդ ծերունին մեռավ վերքերից և հյուժվելուց, բայց մահից առաջ հաղորդեց, վոր մանուկը վերջերս սպանված հնդիկների առաջնորդի վորդին ե և Սախեմի կոչման ժառանգը: Ծերունու ղիակը տաքացրեց վորբին, վորը հետո դարձավ գեղեցիկ և ճարպիկ մարմնամարդ:



Ինքը կրկեսի տերը հենց հիմա իմացավ, վոր Անտիլոպան մի ժամանակ յեղել ե Հիավաթան, և վոր Սև Բագեն յելույթ պետք ե ունենա իր նախնիքների շիրիմների վրա: Այդ տեղեկությունը կրկեսի տիրոջն այն համոզմունքին բերեց, վոր նա մեծ, լրիվ մուտք կունենա: Միայն պետք ե մի այնպիսի բան սահմանել, վոր ապավորություն թողնի:

Անտիլոպի բազմաթիվ բնակիչները աղմուկով հավաքվում էին կրկես: Նրանք հպարտանում էին, վոր Գերմանիայից բերած և յերբեք կարմրամորթ չտեսած իրենց կանանց և յերեխաներին կարող են ցույց տալ Սև ոձերի ժառանգը և ինքնագոհ ասել նրանց.

— Նայեցեք: Սա մեկն է այն զարհուրելի դաժան մարդկանցից, վորոնց մենք շնչեցինք սրանից 15 տարի առաջ:

Գերմանուհիներն արտահայտեցին և՛ զարմանք և՛ վախ:

Յեվ ամբողջ քաղաքում անդադար կրկնում էին.

— Սախեմ, Սախեմ, Սախեմ:

III

Յերեկոյան ժամի ութն եր: Հրաշալի, անդորր, աստղոտ գիշեր: Չով քամին քաղաք է բերում նարնջի պուրակների բույրը և խառնում գարու ածիկի* հոտի հետ:

Կրկեսը պայծառ լուսավորված է. գլխավոր մուտքի առաջ ծխում են ջահերը: Դռան առաջ ծփում են խումբ-խումբ մարդիկ: Կրկեսը ներքուստ լիքն է մարդկանցով: Տեղերի մեջ անցքերը ճոճում են վոտքերի տակ, և շուտով վոչ մի ազատ տեղ չմնաց:

Կրկեսն այնպես լույս է, ինչպես ցերեկը: Լույսի շողերը անդրադառնում են ճաղատ գլուխների վրա, լուսավորում են առևտրականների գերուկ գլուխները, ջահել կանանց և յերեխաների դեմքերը:

Ամենքն անհամբեր սպասում են ներկայացման բացվելուն: Վերջապես խփեց վաղուց սպասվող զանգը: Հայտնվում են վեց ախոռապան ու խմբով կանգնում կրկեսի հրապարակի ցանկապատի մոտ:

Ելի մի զանգ, և հրապարակ դուրս թռավ սի ձի՛ առանց սանձի և առանց թամբի, մեջքին շղարշի և ժապավենների մեջ կորած հայտնի կին ձիավոր Լինան:


Սկսվում են թռիչքներ և մարզանքներ. ձին գեղեցիկ վազում է. մտրակները շառաչում են, մի քանի ծաղրածու վժվժում են և

* Հայ գյուղերում ել սովորություն կա գարուց ու ցորենից ածիկ պատրաստել: Նախ ցանում են. ծլերն յեփելով մի քաղցր շփոթ են պատրաստում, շատ քաղցր և համով: Այդ ասվում է ածիկ: Խ. Ա.

շփշփացնում իրար յերեսի: Ելի մի քանի շարժում, և Լինան, կայծակի պես փայլելով, անհայտացավ:

Գալիս է յերկրորդ համարը: Սախեմ բառը բերանից բերան է անցնում: Դիտող հասարակությունը վոչ մի ուշադրություն չի դարձնում ծաղրածուների վրա:

Ախոռապանները բերին բարձր սյուներ, ամրացրին հրապարակի յերկու ծայրում և նրանց վրա քաշեցին մետաղե լարը:



Հանկարծ ամբողջ հրապարակի վրա բոցավառվեց բենգալյան կրակը և շուրջը տարածեց արնագույն փայլ: Յեվ անա այդ հրավառության մեջ պետք է հայտնվի անուելի Սախեմը՝ «Սև ոձերի» վերջին ժառանգը:

Այդ ժամանակ դուրս յեկավ կրկեսի տեսուչը և դիմեց հանդիսականներին հետևյալ խոսքերով.

— Լեզիներ և ջենտրլմեններ, վողջուհու՞մ եմ ձեզ, այստեղ հավաքվածներդ: Շատ եմ խնդրում հարգելի ջենտրլմեններին և գեղեցիկ լեզիներին, վոր ներկայացման ժամանակ լինեն կատարյալ հանգիստ, չծափահարեն, տեղերը չփոխեն, վորովհետև այս յերեկո Սախեմը ջղայնացած է և սովորականից ավելի վառագավոր:



Յերբ Լինան թոխչքներ եր կատարում ձիու վրա, Անտիլոպի քաղաքացիները բախտավոր եյին, վոր նստած եյին առաջին շարքերում, վորտեղից «այնպես լավ է տեսնվում»:

Հիմա արգեն նույն մարդիկ նախանձուս հայացք են գցում վերի կարգերի վրա և գտնում են, վոր «ներքևում խեղդող է»:

Բայց Սախեմը կարող է արդյոք հիշել: Չե՞ վոր նա վաղ մանկությունիցն է ապրում կրկեսում: Իսկ այնտեղ բոլոր դերասանները

բարեկարգ գերմանացիներ են: Միթե նա դեռ ամեն ինչ չի մոռացել: Վե՛չ, այդ անկարելի յե:

Տասնհինգ տարվա ընթացքում այս կրկեսում նրա խաղը, շըրջապատող միջավայրը, յելույթները և ծափերը, այս բոլորը, հավանական է, հարկավոր ազդեցություն են արել հնդիկի վայրենի բնավորության վրա:

Հիավաթն, Հիավաթն: Բայց չե՞ վոր նրանք ել մարդ են: Չե՞ վոր նրանք՝ գերմանացիները՝ նույնպես իրենց Գերմանիայում չեն, այլ ոտարության մեջ. բայց նրանք իրենց հայրենիքի մասին մտածում են այն չափով, ինչ չափով թույլ է տալիս նրանց առևտուրը, և «Սև ոձերից» վերջինը պարտական է և կարող է հիշել իր նախնիքներին: Յե՛վ Սախեմը...

IV

Վայրենի սուլոցը լավեց ախոռներից և միանգամից ընդհատեց բոլոր մասձմուռները:

Սուլոցի հետ միաժամանակ հրապարակ յեկավ Սախեմն ինքը: Ամբոխի մեջ փսփսոցն ընկավ:

— Սա նա յե, սա նա յե:

Տիրեց մեռելային լուռթյուն: Լսվում եր հրապարակի մուտքի առաջ նորից վառած բենգալյան կրակների ճարճաայուհու:

Հազարավոր աչքեր հառել են առաջնորդի վրա, վոր դուրս է գալիս հրապարակ իր նախնիքների շիրիմների վրա...

Հնդիկն իսկապես արժանի յե, վոր իրենով հիանան:

Նա հպարտ է, բարձրահասակ և բարեկազմ: Սպիտակ կզաքիսի մորթուց թիկնոցը գրկում է նրա վայելչակազմ և ճկուն մարմինը:

Նրա հպարտ դեմքը կարծես բրոնզից է կերտած և հիշեցնում է արծվին, հայացքը գուտ հնդկական, հանգիստ, սառը, չարագուշակ: Սախեմը կանգ առավ հրապարակի կենտրոնում և սկսեց ուշադիր դիտել հանդիսականներին, ասես իր համար գոհ եր ընտրում:


Նա լրիվ գինված է:

Ծածանվում են գլխի փետուրները: Գոտիում խրված են ասամազավկան* և մորթի մաշկոդ դանակը: Միայն աջ ձեռքում նետի

* Հնդկական գենք, նման կացնի:

և սլաքների փոխարեն կա մի յերկար ձկուն ձող նրա համար, վոր լարի վրա մանգալիս հավասարակշռութունը պաշտպանի:

Սախեմը, յերկու անագին թուիչք անելով, արձակեց հնդիկների մարտական կոչը:



— 2 վոր դա «Սև ոձերի» կովի կոչն է, — լավեց կրկեսում: Նրանք, ովքեր սրանից վոչ շատ առաջ գիշերով հարձակվել էին քնած Հիավաթի վրա և գազանաբար կոտորել էր լորին, իսկույն հիշեցին այդ զարհուրելի ձայնը: Յեւ զարմանալի բան: Այդ մարդիկ, վոր 15 տարի սրանից առաջ չվախեցան այդպիսի հազարավոր հնդիկ մարտիկներից, զգացին թե ինչպես իրենց վրա սառը քրտինք է գալիս:

Բայց տեսուչը մոտենում է հնդիկին և հանգստացնում է նրան: Սախեմը մոտենում է լարին:

Հնդիկը, հայացքը ուղղելով նավթի ջահին, դուրս է գալիս լարի վրա: Լարը ծովում է: Բուպեներ են լինում — նա դառնում է համարյա աննկատելի, և այն ժամանակ Սախեմը կախված է յերևում ողի մեջ: Նա բարձրանում է, ցածրանում է, պահպանելով հավասարակշռութունը: Նրա դեպի առաջ տարածված ձեռքերը, ծածկված արքայական թիկնոցով, Սև արծվի թևերն են հիշեցնում:

Նա ցնցվում է: Ընկավ: Վնչ: Լավում են ծափեր և արագ լռում: Առաջնորդի դեմքը դառնում է ել ավելի անուշի: Նրա աչքերը, ջահին հառած, վառվում են մի սարսափելի կրակով:

Կրկեսում անհանգստութուն է, բայց ամենքը խորին լռութուն են պահուպանում: Այդ ժամանակ հնդիկը մոտենում է լարի ծայրին:

Դեռ լարի ծայրը չհասած՝ Սախեմը կանգ է առնում և յերգում է կովի յերգը: Չարմանալի բան: Հնդիկների առաջնորդը յերգում է գերմաներեն: Ամենքը, շունչերը պահած, լսում են այդ յերգը, վոր քանի գնում ուժեղանում է և բարձրանում:

Առաջնորդի յերգը մի կոչ է, վայրենի, լիքը գիշատիչ յերանգներով: Յերգում լսվում են այս խոսքերը՝

«Ամեն տարի, մեծ անձրևներից հետո, 500 մարտիկ թողնում էյին Հիավաթան և, դուրս գալով, բռնում էյին կովի և «մեծ վորսերի» ճանապարհը: Կովից վերադառնալով՝ այդ մարտիկները զարդարված էյին լինում մորթի մաշկոդ դանակներով: Վորսից վերադառնալով հետները բերում էյին բիզոնների (վայրենի ցուլերի) միսն ու մորթիները, և կանայք վողջուհուհու էյին մարտիկներին մեծ ուրախությամբ:

Հիավաթան բախտավոր էր: Կանայք ապրում էյին իրենց վիզվաճներում, յերեխաները աճում դառնում էյին քաջ, անվեհեր մարտիկներ, կամ գեղեցիկ աղջիկներ: «Սև ոձերը» մեռնում էյին փառքի դաշտում: Նրանց տամագավկաները չներկվեցին կանանց և յերեխաների արյունով, վորովհետև Հիավաթի մարտիկները ազնիվ հոգու տեր մարդիկ էյին:

Հիավաթան հզոր եր: Բայց յեկան գունատ-դեղնած դեմքերը հեռավոր ծովերից և Հիավաթան կրակի մատնեցին: Սպիտակ մարտիկները բաց կովի շկանչեցին «Սև ոձերին»: Նրանք դավաճանորեն, ինչպես շախկալները, գիշերով հարձակվեցին նրանց վրա: Այդ գունատ-դեղնած շները խրեցին իրենց դանակները քնած աղամարդկանց, կանանց և յերեխաների կուրծքը:



Հիավաթան ել չկա հիմա: Սպիտակները նույն տեղի վրա հիմնեցին իրենց քարե վիգվանները: Սև ոձերի ջնջված ցեղը և ավերակները աղաղակում են՝ վրեժ, վրեժ:

Սախեմի ձայնը խուսուսեց: Բուրբի գլխավերևը, լարի վրա, հավասարակշռութուն պահպանելով, Սախեմը, կատաղութունից խելքը կորցրած, վազրի յեր նման: Կրկեսում տիրում եր մեռելային լուսություն:

Առաջնորդը շարունակեց յերգել:

«Ամբողջ ցեղից վոչ վոք չմնաց, բացի մի մանուկ: Նա թույլ եր և փոքրիկ, բայց դարձյալ յերգվեց հողի մեծ վոգուն, վոր նա վրեժ կառնի: Նա յերգվեց, վոր կտեսնի իր ցեղը կոտորողների դիակները: Նա կվառի մի հսկա խարույկ և կթափի իր թշնամիների արյունը»:

Առաջնորդի վերջին խոսքերը փոխվեցին բացարձակ մոռուցի:



Կրկեսում բարձրացավ մի տրտունջ, դժգոհութուն: Հագարավոր հարցեր խոնավում եյին նրանց գլուխներում:

Ի՞նչ կանի նրանց այդ կատաղի վազրը, ի՞նչ վնաս կարող է հասցնել նրանց: Ի՞նչպես նա մեն-մենակ իր վրեժը կհանի: Ավելի լավ չի՞ լինի փախչել:

— Այս ինչ է, ինչ, — ամեն կողմից լավում եյին վախեցած կանանց ձայներ:

Հանկարծ Սախեմի կրծքից դուրս պրծավ մի վայրենի մունչոց: Լարը սաստիկ սատանվեց, ժաժ ընկավ: Հնդիկը թռավ հենց Չահի տակ դրված լարն ամրացնող վերելակին և սկսեց թափահարել իր ձեռքի յերկար փայտը՝ լարախաղի թարազը:

Մի սոսկալի միտք կայծակի պես փայլեց հանդիսականների մեջ:

— Նա ուզում է Չահը Չարդել և կրկեսը վողողել վառվող նավթով:

Սարսափի և հուսահատության գոռում-գոչյունը լցվեց կրկեսը: Բոլոր հանդիսականները նետվեցին դեպի դուռը:

Հրապարակից գոչում են՝ «Կանգ առեք, կանգ առեք»:

Առաջնորդը ցատկեց գետին և կորավ դռան մեջ:

Ահա նա նորից դուրս է գալիս՝ ուժասպառ, թուլացած:

Չեռքին անագե մատուցարան: Նա մեկնում է նրան հասարակությանը և շշնջում.

— Շնորհեք «Ս և ո ձ եր ի» վերջինին:

Վոսկե և արծաթե դրամները թափվում են մատուցարանի մեջ:



Ինչպես կարող են «Ս և ո ձ եր ի» վերջինին վողորմություն չտալ բնակիչներն Անախուպի, վորը հիմնված է Հիավաթի ավերակների վրա:

Քաղաքակրթությունը վերամշակեց Ս և ո ձ եր ի վերջին ներկայացուցչին: Նա արդեն չեր զգում իր նախնիքների կոչը:

Լեհ գրող Սենկևիչի այս պատմվածքը կենդանի պատկերացնում է, թե ինչպես է կատարվել Հյուսիսային Ամերիկայի նվաճումը գաղթական երոպացիների կողմից: Գաղթականները ավազակաբար խլել են հնդիկներից, Ամերիկայի վաղեմի բնիկ ազգաբնակչությունից, նրանց հողերը, անխնա կոտորելով նրանց:

Կապիտալիստական աշխարհը գիշատիչ կերպով քանդել է այն բոլորը, ինչ պատահել է իր ճանապարհին, դարձնելով հնդիկներին գաղութային ստրուկներ: Մի ժամանակ հնդիկները մեծ հողերի տերեր էյին: Այդ հողերը տարածվում էյին Ատլանտյան Ովկիանոսի ափերից սկսած մինչև Խաղաղ Ովկիանոսի ափերը: Իսկ հիմա հնդիկներն ապրում են սահմանափակ հողամասի վրա, վոր հատկացրել է նրանց Հյուսիսային Ամերիկայի կառավարությունը: Կառավարությունը, խլելով հնդիկներից բոլոր հողերը, փոխարենը տվել է նրանց մի փոքրիկ հողամաս, վորպեսզի միայն նրանով ապրեն:

Հնդիկների նախկին գյուղերի տեղ հիմա կանգնած են բազմաթիվ բարեկարգ քաղաքներ իրենց ֆաբրիկաներով և գործարաններով, — քաղաքներ, վորոնք հիմնված են բնաջնջված հնդիկների արյան և վոսկորների վրա:

Առաջ Ամերիկայում բնակվող հնդիկների թիվը շատ մեծ էր, իսկ հիմա այդ թիվը հասել է 24.000-ի, վորովհետև հնդիկների ցեղը, տարեց-տարի մեռնելով, պակասում է: Սրանից դեռ 10 տարի առաջ հնդիկների թիվը 32.000 էր: Յեվ նրանք իհարկե վոչ մի քաղաքական իրավունք չունեն. խափշիկ կամ հնդիկ սպանելն Ամերիկայում հանցանք չի համարվում, և ամերիկացին այդ սպանության համար չի յենթարկվում վոչ մի պատժի:

Լեհինիզմի ծրագրում կա մի կետ — ազատել գաղութային ստրուկներին կապիտալի տիրապետությունից, նրանց բնաջնջող, նրանց անխնա շահագործող կապիտալի տիրապետությունից:





Г. Сенкевич

Вождь индейцев

На армянском языке.